

**ՆԵՐԱԿՆԱՅԻՆ ՅԵՂՈՒԿՈՒՄ ՖԻԲՐՈՆԵԿՏԻՆԻ,
ԻՆՍՈՒԼԻՆԱՆՄԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆ 1-Ի և
E₂ ՊՐՈՍՏՈԳԼԱՆԴԻՆՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ
ԾԵՐՈՒՆԱԿԱՆ և ԲԱՐԴԱՑՎԱԾ ԿԱՏԱՐԱԿՏՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

ԶԻԼՅԱՆ Ա.Ա.

Երևանի Մ. Յերացու անվ. պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն,
Երևան, Հայաստան
«Շենգավիթ» բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան

Իմունաֆերմենտային անալիզի միջոցով ուսումնասիրվել է ծերունական, գլաուկոմայի ֆոնի վրա ընթացող, ինչպես նաև գլաուկոմայի ու պսևվոդեքսֆոլիատիվ սինդրոմի ֆոնի վրա ընթացող կատարակտներով պացիենտների ներակնային հեղուկը: Ծերունական կատարակտով պացիենտների ներակնային հեղուկի ցուցանիշների համեմատ, բարդեցված կատարակտով պացիենտների ներակնային հեղուկում գրանցվել է ֆիբրոնեկտինի, ինսուլինանման աճի հորմոն-1-ի և E₂ պրոստագլանդինների համեմատաբար բարձր ցուցանիշներ:

Շնորհիվ կատարված ուսումնասիրությունների, որակապես նոր դիրքերից պետք է դիտարկել ֆիբրոբլաստների աճի տրանսֆորմացիայի գործոնի դերը ACAID-ի կազմավորման և վերացման պրոցեսների ընթացքում - նրան դիտարկելով, որպես եղջրաթաղանթի և տրաբեկուլյար ցանցի բջիջների կողմից ֆիբրոնեկտինի և ինսուլինանման աճի գործոն 1-ի ընտրողաբար սինթեզի պրոցեսների ստիմուլացնող ազդեցության ունեցող գործոն:

Ստացված տվյալների համաձայն կարելի է եզրակացնել, որ ACAID-ի վերացման մեխանիզմներում բացի TGF_{β-2}-ից կարևոր դեր պետք է հատկացնել E₂ պրոստագլանդիններին, քանի որ բարդացված կատարակտների դեպքում նրանց բարձր մակարդակը կարող է *in situ* ընկճել ցիտոտոքսիկ T-լիմֆոցիտների ակտիվությունը և, դրանով իսկ, աչքի հետարգելափակոցային թաղանթներում օժանդակել հումորալ իմունիտետի ռեակցիայի ակտիվացմանը:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY